ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Ашот Мелконян (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Ashot Melkonyan (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան - ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 6

Эдик Минасян - АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА ... 26

Edik Minasyan - ARMENIAN-TURKISH RELATIONS DURING THE YEARS OF INDEPENDENCE OF THE RA 28

Էդուարդ Զոհրաբյան - ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1930-1980-ԱԿԱՆ ԹԹ. 31

Эдуард Зограбян - ПРОЦЕСС ИДЕОЛОГИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ С 1930 ПО 1980-ЫЕ ГОДЫ 39

Eduard Zohrabyan - THE PROCESS OF IDEOLOGICAL TNANSFORMATION OF SOCIIETY IN Soviet Armenia in 1930-1980 39

Ֆելիքս Մովսիսյան - ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ 40

Феликс Мовсисян - АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ ОБ ИРЛАНДСКОМ НАЦИОНАЛЬНОМ ДВИЖЕНИИ 1840-Х ГОДОВ 57

Feliks Movsisyan - ARMENIAN PUBLIC OPINION ON THE IRISH NATIONAL MOVEMENT OF THE 1840s 57

Валерий Тунян - ПОБОРНИКИ ОТРИЦАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН 59

Վալերի Թունյան - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՁԱՏԱԳՈՎՆԵՐԸ 64

Valery Tunyan - DEFENDERS OF THE DENIAL OF THE ARMENIAN GENOCIDE 64

Վանիկ Վիրաբյան - ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ 65

Ваник Вирабян - МЕЖЭТНИЧЕСКИЕ СОБЫТИЯ И АНТАНТОВСКИЕ ГОСУДАРСТВА В ЗАКАВКАЗЬЕ ПОСЛЕ ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ 1917 ГОДА 82

Vanik Virabyan - INTERETHNIC DEVELOPMENTS AND THE ENTENTE STATES IN TRANSCAUCASIA AFTER THE OCTOBER 1917 REVOLUTION 82

Սարգիս Գրիգորյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 84

Саргис Григорян - АКТИВНОСТЬ АЗЕРБАЙДЖАНСКИХ ИСЛАМИСТОВ НА КАВКАЗЕ И БЛИЖНЕМ ВОСТОКЕ 91

Sargis Grigoryan – ACTIVITY OF AZERBAIJANI ISLAMISTS IN THE CAUCASUS AND IN THE MIDDLE EAST 92

Նառա Սարգսյան - ՀԱՄԻԴՅԱՆ ՁԱՐԴԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ» ՎԻՊԱԿՈՒՄ 93

Нара Саргсян – ОТРАЖЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ ХАМИДИЙСКОЙ РЕЗНИ В ПРОИЗВЕДЕНИИ АРПИАР АРПИАРЯНА “БАГРОВОЕ ПРИНОШЕНИЕ” 101

Nara Sargsyan – THE REFLECTION OF PSYCHOLOGICAL INFLUENCE OF HAMIDIAN MASSACARES IN ARPIAR ARPIARYAN'S NOVELETTE "THE CRIMSON OFFERING" 101

Էդգար Չախոյան - Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունները Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության առաջին շրջանում (2004-2007 թթ.) 102

Эдгар Чахоян – ДИПЛОМАТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ГРУЗИИ И США ПРИ ПЕРВОМ ПРЕЗИДЕНТСКОМ СРОКЕ МИХАИЛА СААКАШВИЛИ (2004-2007 гг.) 112

Edgar Chakhoyan - DIPLOMATIC RELATIONS BETWEEN GEORGIA AND THE USA DURING THE FIRST PERIOD OF THE PRESIDENCY OF MIKHAIL SAAKASHVILI (2004-2007) 113

Арман Сафарян – О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ КОНВЕРГЕНТНОЙ И МУЛЬТИМЕДИЙНОЙ ЖУРНАЛИСТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 114

Արման Սաֆարյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՐԳԵՆՏ և ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 118

Safaryan Arman – ON SOME FEATURES OF CONVERGENT AND MULTIMEDIA JOURNALISM IN THE REPUBLIC OF ARMENIA 118

Անդրանիկ Եսայան – ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVIII Դարի ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ 119

Андраник Есаян – СИТУАЦИЯ В СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 18 ВЕКА 125

Andranik Yesayan – THE SITUATION IN NORTHEASTERN ARMENIA IN THE FIRST QUARTER OF THE 18-TH CENTURY 126

Տարոն Սաքոյան - ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (2010-2016) ... 127

Тарон Сакоян - ИНТЕРЕСЫ И ПРОТИВОРЕЧИЯ ТУРЦИИ И РОССИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В НОВЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ РЕАЛИЯХ (2010-2016) 136

Taron Sakoyan - INTERESTS AND CONTRADICTIONS BETWEEN TURKEY AND RUSSIA IN THE SOUTH CAUCASUS IN NEW GEOPOLITICAL REALITIES (2010-2016) 136

Majid Karimi - THE ETIMOLOGY AND ORIGINS OF THE NAME NAKHICHEVAN FROM THE HISTORICAL SOURCES 137

Մաջիդ Քարիմի - ՆԱԽԻՋԵՎԱՆ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ 147

Маджид Карими - ЭТИМОЛОГИЯ И ПРОИСХОЖДЕНИЕ НАЗВАНИЯ НАХИДЖЕВАН ПО ИСТОРИЧЕСКИМ ИСТОЧНИКАМ 147

Օֆելյա Դարբինյան - ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 148

Офелия Дарбинян - ОСОБЕННОСТИ РЕПАРТАЦИИ ЛИВИНСКИХ АРМЯН, РЕЗУЛЬТАТЫ И ПОСЛЕДСТВИЯ (1946-1949 ГГ.) 158

Ofelya Darbinyan - PECULIARITIES, RESULTS AND CONSEQUENCES OF THE REPATRIATION OF THE LEBANESE-ARMENIANS (1946-1949) 158

Արևշատ Մինասյան - ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 159

Аревшат Минасян - АРМЯНСКАЯ ОБЩИНА УРУГВАЯ 164

Arevshat Minasyan - THE ARMENIAN COMMUNITY OF URUGUAY 164

Միքայել Միքայելյան - ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԵՈՍ II ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՀԵՏ 166

Микаел Микаелян - ВСТРЕЧА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН МАТТЕОСА II ИЗМИРЛЯНА С РОССИЙСКИМ ИМПЕРАТОРОМ НИКОЛАЕМ II 172

Mikayel Mikayelyan - MEETING OF CATHOLICOS OF ALL ARMENIANS MATTEOS II IZMIRLYAN WITH RUSSIAN EMPEROR NICHOLAS II 172

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Սամվել Մկրտչյան - ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ 173

Самвел Мкртчян – ПРОЯВЛЕНИЕ ЭТНИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ И ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ В АРМЯНСКОЙ ПРАЗДНИЧНООБРЯДНОЙ КУЛЬТУРЕ 178

Samvel Mkrtchyan - MANIFESTATIONS OF ETHNIC IDENTITY AND HISTORICAL MEMORY IN THE ARMENIAN FESTIVAL AND RITUAL CULTURE 178

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Մերի Հովհաննիսյան - ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 180

Мери Оганнисян - *ОСОБЕННОСТИ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ* 186

Meri Hovhannisyan - PECULIARITIES OF PROJECT-BASED LEARNING 186

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ .. 188
ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆԳՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ 190
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ 192

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

НА ПЕРЕКРЕСТКЕ ИСТОРИЧЕСКИХ И ЕСТЕСТВЕННЫХ НАУК 194

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 196
INFORMATION ABOUT THE AUTHORS 197

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 198

Սարգիս Գրիգորյան

ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Հիմնաբառեր. Իսլամականներ, ծայրահեղականություն, Ադրբեջան, «Իսլամական պետություն», Կովկաս, Մերձավոր Արևելք:

20-րդ դարի վերջից և 21-րդ դարի սկզբից մուսուլմանական երկրներում սկսված վերափոխումներն իրենց ազդեցությունն ունեցան իսլամական ծայրահեղական նոր ալիքի բարձրացման վրա աշխարհի մուսուլմանաբնակ հատվածներում, այդ թվում՝ Կովկասյան տարածաշրջանում, մասնավորապես Ադրբեջանում: Այդ առումով Ադրբեջանում տեսանելի է իսլամական ծայրահեղականության ակտիվություն և Կովկասյան ու Մերձավորարևելյան տարածաշրջաններում ադրբեջանցի իսլամականների ակտիվ ներգրավվածություն: Սույն հոդվածում ուսումնասիրվում են ադրբեջանցի իսլամականների ակտիվությունը, դրա պատճառները, առարկայական կիրարկումները, գործողությունների արեալը, վտանգներն ու սպառնալիքները Կովկասում և Մերձավոր Արևելքում: Այդ դրսևորումները տեսանելի են հատկապես սունի ադրբեջանցիների շրջանում:

Իսլամական ծայրահեղ արմատականությունն Ադրբեջանում 1990-2011 թթ.

Կովկասում աճող իսլամական արմատական տրամադրությունները չէին կարող չնպաստել մուսուլմանական Ադրբեջանում իսլամի արմատական գաղափարների տարածմանը, որը հատկապես նկատվեց Ադրբեջանի անկախացումից հետո, երբ իսլամի շիայական, սուննիական (նաև արմատական), սուֆիական ուղղությունները (նակշբանդիա, կադիրիա և այլն), ինչպես նաև թուրքամետ իսլամական ուղղությունները (նուրսիզմ, գյուլենականություն և այլն), ստանալով աջակցություն մուսուլմանական մի շարք արտաքին ուժային կենտրոններից, զանազան մարդասիրական ու բարեգործական ծրագրերի քողի տակ հաստատվեցին և շատ դեպքերում խոր արմատներ ձգեցին այս երկրում[1]:

1990-ական թթ. իսլամական գաղափարների տարածմանը զուգընթաց մեծ մասամբ շիադավան Ադրբեջանում ավելանում էին նաև սունի իսլամական արմատական, այդ թվում՝ նաև ծայրահեղ արմատական տրամադրությունները[2]: Ադրբեջանցի իսլամականները ակտիվորեն ներքաշվեցին ոչ միայն Կովկասում տեղի ունեցող հակամարտություններում (Ղարաբաղյան հակամարտություն, Չեչենական պատերազմներ), այլև այլ տարածաշրջաններում ընթացող ջիհադին (Աֆղանստան, Պակիստան, Աֆրիկա և այլն)[3]: Այս առումով պետք է նշել, որ 1988-1994 թթ. Ղարաբաղյան հակամարտության ժամանակ Ադրբեջանի կողմից մարտնչում էին նաև աֆղանական պատերազմով անցած բազմաթիվ ջիհադականներ[4], որոնց մի մասը Ադրբեջանից հետագայում տեղափոխվեց Չեչնիա՝ զինված գործո-

---

* Հոդվածը ներկայացվել է 20.09.2021 թ., գրախոսվել՝ 21.12.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.12.2021 թ.:

[1] Տե՛ս Юнусов А., Исламская Палитра Азербайджана, Баку, 2012, с. 7-10, http://www.kavkazoved.info/images/myfls/files/au-full.pdf.

[2] Ըստ պաշտոնական տվյալների՝ Ադրբեջանում շիադավանների և սուննիադավանների տոկոսային հարաբերակցությունը կազմում է համապատասխանաբար 70 % և 30 % (Metbuat.az, Komitə sədri, Azərbaycanda müsəlmanların 70 faizi şiə, 30 faizi əhli-sünnədir, 28 November 2016, http://metbuat.az/news/575941/komite-sedri-azerbaycanda-muselmanlarin-70-faizi-sie-30-faiz.html), սակայն ըստ Կովկասի մուսուլմանների վարչության առաջնորդ Ալլահշուքյուր Փաշազադեի՝ Ադրբեջանում շիադավանների թիվը կազմում է 65 %, իսկ սուննիադավաններինը՝ 35 % (Report.az, Аллахшукюр Пашазаде, Порядка 35% населения Азербайджана – сунниты, 65% – шииты, 14 февраля 2015 г., http://report.az/ru/religiya/allahshukyur-pashazadepredpolagaetsya-chto-v-azerbajdzhane-35-naseleniya-sunnity-a-65-shiity/):

[3] Տե՛ս Jihadology.net, Zelin A., The Clear Banner: The Forgotten Fighters: Azerbaijani Foreign Fighters in Syria and Iraq, February 2, 2015, http://jihadology.net/2015/02/02/the-clear-banner-azerbaijani-foreign-fighters-in-2014/, տե՛ս նաև Youngman M., Cerwyun M., նշվ. աշխ., էջեր 18-19:

[4] 1990-ական թթ. սկզբին Ադրբեջանը արցախյան պատերազմում դիմեց մուջահիդների օգնությանը, և այդ կոչն անարձագանք չմնաց: Քաբուլից Բաքու ուղիղ չվերթներով Ադրբեջանում էին հայտնվում, այնուհետև արցախյան ճակատ էին փոխադրվում հարյուրավոր մուջահիդներ (այդ թվում՝ Խատաբը, Շամիլ Բասաևը և այլք) ջիհադական պայքարին մասնակցելու համար (տե՛ս Шерматова С., Террористы секонд-хэнд, // Московские новости, 2001, 20 сентября):

դություններին մասնակցելու համար, իսկ մյուս մասը մնաց Ադրբեջանում՝ ակտիվ դերակատարում ստանձնելով երկրում արմատական շարժումների կայացման գործում[1]:

1990-ական թթ. կեսերին նկատվեց Ադրբեջանում գործող իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող ջիհադականների (ինչպես ադրբեջանցի, այնպես էլ օտարերկրյա) ակտիվ ներգրավվածություն Կովկասում ընթացող գործընթացներում[2]: 1990-ական թթ. կեսերին Չեչնիայում և Դաղստանում Խատաբի և իսլամական ծայրահեղ արմատական այլ լիդերների ճամբարներում ռազմական պատրաստություն են անցել նաև մեծ թվով ադրբեջանցի իսլամականներ[3]:

Հիշյալ ժամանակահատվածում Ադրբեջանում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցները մասնակցություն ունեցան նաև Կովկասից դուրս իրականացված այնպիսի հնչեղություն ստացած ահաբեկչական գործողություններին, ինչպիսիք էին 1998 թ. Քենիայում և Տանզանիայում ամերիկյան դեսպանատների պայթեցումները և այլն[4]: Այդ համատեքստում պարզ է դառնում, որ մուսուլմանական աշխարհի որոշ հատվածներում ակտիվորեն գործող իսլամական արմատական կազմակերպությունները (օրինակ՝ «Իսլամական ջիհադ», «ալ-Կաիդա» և այլն) Ադրբեջանում արդեն ունեին վաղուց գործող իրենց բջիջները:

Ադրբեջանում գործող իսլամական արմատական կառույցները օգտվել են նաև «Միջազ-գային մարդասիրական հիմնադրամից», «Հիմնական օգնության հիմնադրամից» և այլ հիմ-նադրամներից տրվող ֆինանսական աջակցությունից: Հիշյալ հիմնադրամներն իրենց ներ-կայացուցչություններն ունեին նաև Բաքվում[5]: 1990-ական թթ. վերջում Բաքվում գործող որոշ «մարդասիրական» կառույցներ, որոնք ղեկավարվում էին սաուդցի և եմենցի կամավորների կողմից, օգտվում էին Մերձավոր Արևելքից եկող ֆինանսական հոսքերից: Ադրբե-ջանում և Վրաստանում գործող հիշյալ «մարդասիրական» կառույցների դրամական միջոց-ներից օգտվել են նաև հայտնի իսլամական առաջնորդները (Խատաբ, Աբու Ումար ալ-Սայֆ և այլն) Կովկասում (մասնավորապես Չեչնիայում) իրենց ռազմաբազաների ֆինանսավորման համար[6]:

2001 թ. դրությամբ Ադրբեջանի իշխանություններին որոշ չափով հաջողվեց միջազգային իսլամական կառույցներին հիմնականում դուրս մղել հասարակական-քաղաքական դաշտից: Սակայն իսլամական արմատական գաղափարները, այդ թվում՝ իսլամական ծայրահեղ արմատական դրսևորումներն Ադրբեջանում շարունակեցին գոյություն ունենալ[7]:

Ադրբեջանում սուննիական իսլամական արմատականության դեմ բռնաճնշումների ու իշխանությունների կողմից շարունակաբար իրականացվող հետապնդումների պատճառով այդ խմբավորումները գործել են ընդհատակում՝ ժամանակ առ ժամանակ ակտիվություն դրսևորելով թե՛ Ադրբեջանում, թե՛ դրա սահմաններից դուրս: Ընդհատակյա գործունեությունն ու շարունակվող հետապնդումները թույլ չեն տալիս ամբողջական պատկերացում

---

[1] Տե՛ս Charalampidis I., Sponsored to Kill, Mercenaries and Terrorist Networks in Azerbaijan, M., 2013, pp. 20-21 (http://karabakhfacts.com/wp-content/uploads/2013/02/Ioannis-Charalampidis-Sponsored-to-Kill-ENG.pdf).

[2] Հատկանշական է ԱՄՆ պետքարտուղարության 1999 թ. հրապարակած զեկույցը, որում Ադրբեջանը բնորոշվում էր որպես ահաբեկչական խմբավորումներին հարող իսլամական ծայրահեղականների թիկունքային աջակցության կոնտրոն (Տե՛ս Гос. Деп. США, Модели глобального терроризма, 1999; Зеркало, 01/04/02):

[3] Տե՛ս Youngman M., Cerwyun M., նշվ. աշխ., էջ 24-25:

[4] Քենիայում և Տանզանիայում ԱՄՆ դեսպանատների դեմ իրականացված ահաբեկչական գործողությունների հետաքննության արդյունքում բացահայտվել է, որ «Ալ-Կաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենը Աֆղանստանից դեպի Բաքու մոտ 60 հեռախոսազանգ է կատարել: Նայրոբիի ահաբեկչական հարձակումից մեկ ժամ առաջ Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից դեպի Լոնդոն «Ալ-Կաիդայի» կողմից հիշյալ ահաբեկչության պատասխանատվության ստանձնումը հաստատող արաբերեն ուղերձ է հղվել (տե՛ս Yunusov A., Islam in Azerbaijan, Institute for Peace and Democracy, Baku, Azerbaijan, 2004, pp. 245-247), նաև տե՛ս Demoyan H., The Islamic Mercenaries in the Karabakh War, The Way International Terrorist Networks Penetrated Azerbaijan, Yerevan 2004, pp. 5-17, http://www.karabakhcenter.com/images/menus/31-5/the_islamic.pdf):

[5] Տե՛ս Стратегическая политика, Боданский Й., Служба Исследований Конгресса США, Oktober 9, 2001:

[6] Տե՛ս Youngman M., Cerwyun M., նշվ. աշխ., էջ 18-20:

[7] Տե՛ս Փաշայան Ա., Իսլամն Ադրբեջանում. Անցյալը և ներկան, Ե., 2014, էջ 126-127:

ունենալ Ադրբեջանում իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներ կրողների թվի վերաբերյալ: Կցկտուր տեղեկությունները լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն[1]:

Իշխանության կողմից բռնաճնշումների հետևանքով ընդհատակում շարունակում են գործել իսլամական ծայրահեղ արմատական տրամադրություններով առաջնորդվող մի շարք կառույցներ: Դրանցից առավել աչքի են ընկնում հետևյալները.

«Ալ-Ջիհադ» – 1995 թ. Ադրբեջանում ստեղծված առաջին իսլամական ծայրահեղ արմատական կառույցներից էր, որի հիմնադիրը եգիպտացի Իբրահիմ Այդարուսին էր: 1990-ական թթ. երկրորդ կեսից «Ալ-Ջիհադը» որդեգրեց ահաբեկչական գործելաոճ՝ հարելով «Ալ-Կաիդային»[2]: Այս պահին կառույցի մասին տեղեկություններ չկան:

«Հիզբ ուլ-Թահրիր» – Կառույցի առաջին անդամները Ադրբեջան ժամանեցին 2000 թ. Հյուսիսային Կովկասից: 2001 թ. օգոստոսին Ուզբեկստանի քաղաքացի Աբդուրասուլ Աբդուքերիմովի կողմից ստեղծվեց այդ կառույցի ճյուղավորումն Ադրբեջանում: Նույն թվականին կառույցը հայտարարվեց ահաբեկչական, իսկ դրա 6 անդամները (5 ադրբեջանցի և 1 ուկրաինացի) ձերբակալվեցին Ադրբեջանի աշխարհիկ կարգերը տապալելու փորձերի և ահաբեկչություններ պլանավորելու համար[3]: Այս պահին կառույցի մասին տեղեկություններ չկան:

«Անտառային եղբայրներ» – Ստեղծվել է Դաղստանի հարավում: 2007-2008 թթ. «Անտառային եղբայրներ» խմբավորումը ղեկավարեց ադրբեջանցի Իլգար Մոլաչիևը[4], ով Խատաբի, Շամիլ Բասաևի և մի շարք այլ իսլամականների ղեկավարությամբ ակտիվորեն մասնակցել է չեչենական պատերազմներին: Իլգար Մոլաչիևը ակտիվացրեց կառույցի գործունեությունը նաև Ադրբեջանում (առևանգումներ, փրկագների պահանջ, զինված հարձակում Բաքվի Աբու Բաքր մզկիթի վրա և այլն)[5]: 2012 թ. ապրիլին ադրբեջանական ուժային կառույցների կողմից հակաահաբեկչական գործողություններ իրականացվեցին Բաքու, Գյանջա, Սումգայիթ, Զաքաթալա, Քախ, Շեքի և Կուսար բնակավայրերում: Ձերբակալվեց 17 մարդ, սպանվեց «Անտառային եղբայրների» այդ ժամանակվա առաջնորդ Վուգար Պադարովը: Հիշյալ կառույցի, վերջինիս անդամների ձերբակալությունների մասին ժամանակ առ ժամանակ տեղեկություններ են հայտնվում ադրբեջանական լրատվական ռեսուրսներում:

«Ղարաբաղի պարտիզաններ» – Ադրբեջանում ակտիվորեն գործող իսլամական խմբավորումներից է: Կառույցը համալրված է ջիհադական պայքարի փորձ ունեցող ադրբեջանցի իսլամականներով, որոնք մասնակցել են Աֆղանստանի և Չեչնիայի պատերազմներին, ներգրավված են եղել նաև Լեռնային Ղարաբաղում հայկական ուժերի դեմ իրականացվող ռազմական գործողություններում[6]: Այս կառույցի անդամների մասին ևս ժամանակ առ ժամանակ տեղեկություններ են հայտնվում ադրբեջանական լրատվական ռեսուրսներում:

---

[1] Ադրբեջանում սունի իսլամական ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող ադրբեջանցիների թիվը տարբեր գնահատականներով տատանվում է 10.000-20.000-ի միջև (տե՛ս Institute for War and Peace, Azerbaijan: Sunni Groups Viewed With Suspicion, Report, 8 April 2011. Available, http://www.unhcr.org/refworld/docid/4da3f66a2c.html. In 2008, International Crisis Group estimated 10,000 as a likely maximum in Azerbaijan):

[2] 1998 թ.՝ Քենիայում և Տանզանիայում ամերիկյան դեսպանատների պայթեցումից մեկ ժամ հետո, Բաքվից Լոնդոն հեռախոսային ֆաքսով ուղերձ է ուղարկվել, որտեղ «Ալ-Կաիդան» պատասխանատվություն էր ստանձնում հիշյալ բռնարարքների համար (տե՛ս Корнелл С., Политизация ислама в Азербайджане, Институт Центральной Азии-Кавказа и Программа исследований Великого шелкового пути, Вашингтон и Упсала, 2006 г., с. 48.): Բացի դրանից՝ այդ ահաբեկչական գործողությունների հետաքննությամբ բացահայտվել է, որ «ալ-Կաիդա»-ի առաջնորդ Ուսամա բեն Լադենը Աֆղանստանից Բաքու մոտ 60 հեռախոսազանգ է կատարել: Նայրոբիի ահաբեկչական հարձակումից մեկ ժամ առաջ Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից դեպի Լոնդոն «Ալ-Կաիդայի» կողմից հիշյալ ահաբեկչության պատասխանատվության ստանձնումը հաստատող արաբերեն ուղերձ է հղվել (տե՛ս Yunusov A., Islam in Azerbaijan, Institute for Peace and Democracy, Baku, Azerbaijan, 2004, pp. 245-247), նաև տե՛ս Demoyan H., The Islamic Mercenaries in the Karabakh War, The Way International Terrorist Networks Penetrated Azerbaijan, Yerevan 2004, pp. 5-17 (http://www.karabakhcenter.com/images/ menus/315/the_islamic.pdf):

[3] Տե՛ս Кавказский Узел, Азербайджан: независимый ислам и государство, 16 июля 2008, http://www.kavkaz-uzel.eu/articles/139308/#s19:

[4] 2008 թ. սեպտեմբերի 7-ին Դաղստանում Մոլաչիևն ու նրա 3 զինակիցները ոչնչացվեցին իրավապահ մարմինների հետ բախման ժամանակ:

[5] Այդ տարիներին մասնաճյուղեր են ստեղծվել Ադրբեջանի տարբեր հատվածներում: Սումգայիթ քաղաքում ձևավորվեց «Սումգայիթի ջամաան», որը 2008, 2009, 2010 թթ. մի շարք զինված գործողություններ իրականացրեց Ադրբեջանում:

[6] «Ղարաբաղի պարտիզանների» անդամներից շատերը 2004 թ. ձերբակալվել էին ադրբեջանական իշխանությունների կողմից՝ մեղադրվելով ջիհադական պայքար ծրագրելու մեջ:

Ադրբեջանում իսլամական արմատականության տարածման գործում ակտիվ են եղել ոչ պետական զանազան «մարդասիրական» կառույցներ, որոնք ֆինանսավորվել են Ադրբեջանից դուրս գործող հիմնադրամներից և կազմակերպություններից: Մասնավորապես Ադրբեջանում 1990-ական թթ. կեսերից գործել են «Իսլամական ժառանգության վերականգնման միությունը», սաուդյան «Օգնության բաշխման միջազգային իսլամական կազմակերպությունը» և այլն, որոնք ոչ միայն զբաղվել են մզկիթների, կրոնական ուսումնական կենտրոնների կառուցմամբ և մարդասիրական բնույթի աշխատանքներով, այլև քարոզել են իսլամական արմատական գաղափարներ[1]:

Ադրբեջանցի իսլամականների ակտիվությունը 2011-2020 թթ.

2011-2020 թթ. ադրբեջանցի իսլամականների ակտիվությունն Ադրբեջանում չնվազեց: Երկրի իրավապահ մարմինները շարունակեցին սուննիական արմատական գաղափարներով առաջնորդվող ադրբեջանցի իսլամականների հանդեպ ճնշումներն ու հետապնդումները: Ձերբակալվածների խուզարկության ժամանակ հայտնաբերվեցին ինքնաձիգներ, ատրճանակներ, նռնակներ ու այլ զինամթերք: Հիշյալ ժամանակահատվածում նկատվեցին նաև իսլամականների հարձակումներ ադրբեջանցի պաշտոնատար անձանց վրա, որոնց հետևանքով եղան զոհեր[2]: Դա վկայում է այն մասին, որ Ադրբեջանում ակտիվ են իսլամական ծայրահեղ արմատական զանազան խմբավորումներ, որոնց ծրագրերում ներառված են նաև ահաբեկչական գործողություններ: 2014 թ. գարնանը Ադրբեջանի խորհրդարանը օրենսդրական փոփոխություններ կատարեց, որոնցով խստացվեց ահաբեկչության և վարձկանության համար նախատեսված պատիժը [3] : Սակայն միջոցառումներն առանձնապես մեծ ազդեցություն չեն ունենում արմատական գաղափարներով առաջնորդվող ադրբեջանցիներին զսպելու համար:

Հիշյալ ժամանակահատվածում ադրբեջանցի իսլամականներն իրենց ակտիվությամբ աչքի են ընկել Կովկասի այլ հատվածներում: Մասնավորապես ադրբեջանցի իսլամականների ակտիվությունը նկատվել է Պանկիսի կիրճում (որը գտնվում է երեք պետությունների՝ Վրաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի հատման միջնամասում) և Վրաստանի ու Ռուսաստանի այլ հատվածներում[4]:

Վրաստանի հարավարևելյան և Հայաստանին սահմանակից Քվեմո Քարթլիի ադրբեջանական բնակչության շրջանում նույնպես նկատելի են իսլամական ծայրահեղ արմատական տրամադրություններ: Ըստ որոշ հասարակական կազմակերպությունների տրամադրած տվյալների՝ Քվեմո Քարթլիում ադրբեջանցի երիտասարդների արդեն մոտ 20 տոկոսը հարել են իսլամական ծայրահեղ արմատականությանը: Ըստ այլ տեղեկությունների՝ Վրաստանում կան ադրբեջանական իսլամական ծայրահեղ արմատականության ակտիվության երեք կենտրոններ՝ մայրաքաղաք Թբիլիսիի արվարձանում՝ *Պոնիչալայում* (հետաքրքիր է, որ 2013 թ. հուլիսին Պոնիչալայում այրվել էր Հայաստանից դեպի Ռուսաստան ուղևորվող բեռնատար ավտոմեքենա)[5], որտեղ կան մոտ 50 ծայրահեղ արմատական ադրբեջանցիներ, որոնք կապված են Բաքվի իսլամական ծայրահեղականների հետ, Քվեմո Քարթլիի *Քեշալո* բնակավայրում, որտեղ կա իսլամական ծայրահեղ արմատականներին սպասարկող մզկիթ, և *Քարաջալա* բնակավայրում, որտեղ նույնպես գործում է արմատականներին սպասարկող մզկիթ[6]:

Ադրբեջանցիները շարունակում են ակտիվություն դրսևորել նաև Մերձավոր Արևելքում տեղի ունեցող ռազմական գործողություններում: Ադրբեջանցիների մասնակցությունը Մերձավոր Արևելքում տեղի ունեցող ռազմական գործողություններին վկայում է,

---

[1] Տե՛ս Кавказский Узел, Азербайджан: независимый ислам и государство, 16 июля 2008, http://www.kavkaz-uzel.eu/articles/139308/#s19:

[2] Տե՛ս Haaretz, Assassination Attempt and Protest Send Warning to Azerbaijan's Rulers, August 6, 2018, https://www.haaretz.com/middle-east-news/assassination-attempt-and-protest-send-warning-to-azerbaijan-s-rulers-1.6344084:

[3] Տե՛ս Кавказский узел, Фаик М., В Азербайджане ужесточены меры наказания за наемничество и терроризм, ИА, 15 марта 2014 г. http://www.kavkaz-uzel.ru/articles/239526/:

[4] Տե՛ս Георгий Лебанидзе, Грузия пытается бороться с влиянием ИГИЛ, Ru.rfi.fr, 12 апреля 2015 г., http://ru.rfi.fr/kavkaz/20150412-gruziya-pytaetsya-borotsya-s-vliyaniem-igil (մուտք՝ մարտի 17, 2016):

[5] Տե՛ս «Թբիլիսիի Պոնիչալա թաղամասում ՀՀ-ից ՈԴ ուղևորվող բեռնատար ավտոմեքենա է այրվել», «Արմենպրես», հուլիսի 19, 2013, https://armenpress.am/arm/news/726663/:

[6] Տե՛ս *Georgia's Muslim Community: A Self-Fulfilling Prophecy?,* European Centre For Minority Issues, *February 2012, pp. 4-14,* http://www.ecmi.de/uploads/tx_lfpubdb/Working_Paper_58_En.pdf (մուտք՝ հոկտեմբերի 24, 2016):

որ Ադրբեջանում իսլամականների հավաքագրման ցանցային կայացած համակարգ է գործում, որի միջոցով ադրբեջանցի իսլամականները ֆինանսավորվում և տեղափոխվում են Մերձավոր Արևելք ջիհադին մասնակցելու համար: Ֆինասավորումն իրականացվում է ինչպես առանձին անհատների, այնպես էլ առանձին կառույցների ու հիմնադրամների միջոցով[1]: Ադրբեջանցիների տարանցիկ ճանապարհն անցնում է հիմնականում Թուրքիայի տարածքով[2]:

Մինչ 2013 թվականը Մերձավոր և Միջին Արևելքում գործում էին ադրբեջանական կամ վերջինիս բաղադրիչի գերակայությամբ առանձին կառույցներ: Վերոհիշյալ ժամանակահատվածում սիրիական հակամարտությունում ներգրավված ադրբեջանցիները համախմբված էին հիմնականում «*Ջայշ ալ-Մուհաջիրին ուա ալ-Անսար*» խմբավորման կազմում, մասնավորապես այդ կառույցի մաս կազմող *«Ադրբեջանական ջամաայի»* մեջ: Վերջինս և նրա կազմում ներգրավված ադրբեջանցի լիդերները հետագայում բավական ակտիվ էին նաև Սիրիայում և Իրաքում[3]: Որոշ ադրբեջանցիներ գործել են նաև *«Աբու Քամիլ»* խմբավորման կազմում, որը հիմնականում չեչեններով էր համալրված: Սիրիայում կառավարական ուժերին սատարող խմբավորումների կազմում ադրբեջանցիների (շիաներ) ներգրավվածության մասին փաստեր ևս կան, որոնց համաձայն՝ շիա ադրբեջանցիները Բաշար ալ-Ասադի շիա-ալաուիական վարչակարգին սատարելու նպատակով Սիրիա են ներթափանցել Իրանի, այնուհետև Իրաքի տարածքից[4]:

Սիրիական և իրաքյան կառավարական ուժերի դեմ պայքարելուց զատ՝ ադրբեջանցի իսլամականներն ակտիվ մասնակցել են տարբեր էթնիկ խմբերի դեմ իրականացված ռազմական գործողություններին[5], որոնք ևս կարելի է դիտարկել ոչ միայն Սիրիայում և Իրաքում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցների, այլև տարածաշրջանային ու արտատարածաշրջանային ուժերի կողմից ուղղորդումների համատեքստում:

Իսլամականների ֆինանսավորման աղբյուրներ են հանդիսացել նաև մուսուլմանական տարբեր երկրներից հավաքագրվող ֆինանսական միջոցները (որոշ մուսուլմանական իշխանական շրջանակներից, տարբեր երկրների մուսուլմանական համայնքներից և անհատական նվիրատվություններից և այլ ճանապարհներով հավաքագրվող ֆինանսական ռեսուրսները): Ադրբեջանցի իսլամականները նույնպես ֆինանսավորվում էին վերոհիշյալ ֆինանսական աղբյուրներից և հենց Ադրբեջանից հավաքագրվող նվիրատվություններից[6]:

2013 թ. կեսերից հետո Սիրիայում և Իրաքում ներգրավված ադրբեջանցի իսլամականների շրջանում նկատվեցին փոփոխություններ. ադրբեջանցի իսլամականները հիմնականում համալրեցին ամենաազդեցիկ «Իրաքում և Շամում իսլամական պետություն» (այս կառույցը 2014 թ. ամռանը վերանվանվեց «Իսլամական պետություն») և «Ջաբհաթ ալ-Նուսրա» (2016 թ. հուլիսի 28-ին «Ջաբհաթ ալ-Նուսրան» հայտարարեց իր լուծարման և նոր խմբավորման՝ «Ջաբհաթ Ֆաթհ ալ-Շամի» ձևավորման մասին, իսկ 2017 թ. հունվարի 28-ին այն վերանվանվեց՝ «Հայա Թահրիր ալ-Շամ») խմբավորումները[7], որոնց կազմում շարունակեցին մասնակցել Սիրիայում և Իրաքում տեղի ունեցող ռազմական գործողություններին: Այդ կառույցների վերազգային բնույթն ու Մերձավորարևելյան տարածաշրջանից դուրս եկող նկրտումներն ընդգրկեցին նաև Ադրբեջանը, որտեղ

---

[1] Տե՛ս Россия зафиксировала перевод денег ИГИЛ из Азербайджана?, Грузия онлаин,22 ноября 2015, http://www.apsny.ge/2015/conf/1448240387.php (մուտք՝ հուլիսի 3, 2016):

[2] Տե՛ս Вербовка террористов в Азербайджане, Voprosik.net, 31 августа, 2014, http://voprosik.net/verbovka-terroristov-v-azerbajdzhane/ (մուտք՝ մայիսի 21, 2015):

[3] Տե՛ս Chechensinsyria.com, Notes From IS's Internal Fitna: Execution of Azeri Jamaat Amir, Baghdadi's Wife dream, and when eating chicken makes you Kuffar, September 4, 2018, http://www.chechensinsyria.com/?p=26129:

[4] Տե՛ս Sabuhi Mammadli, Global Voice, Caucasus, Azerbaijanis on Both Sides of Syrian Conflict, Iwpr.net, https://iwpr.net/global-voices/azerbaijanis-both-sides-syrian-conflict (մուտք՝ դեկտեմբերի 3, 2017):

[5] Բազմաթիվ ադրբեջանցիներ սպանվել են Սիրիայի քրդաբնակ Քոբանիի համար տեղի ունեցած ռազմական գործողությունների ժամանակ: Բացի դրանից՝ ասվածի հավաստումը կարող ենք գտնել նաև իսլամականների կողմից տարածված որոշ փաստաթղթերում, որոնք փաստում են Սիրիայի և Իրաքի քրդաբնակ և եզդիաբնակ հատվածներում սպանված ադրբեջանցի իսլամականների մասին: Տե՛ս զեկույցի վերջում ներկայացված հավելվածը:

[6] Տե՛ս Росфинмониторинг, 3,5 тыс. россиян направляли деньги террористам, Известия, 20 ноября, 2015, (http://izvestia.ru/news/596157, մուտք՝ նոյեմբերի 21, 2015):

[7] Հիշյալ իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների հեղինակավոր, ազդեցիկ և գլոբալ բնույթը ստիպել է ադրբեջանցիներին հրաժարվել առանձին էթնիկ խմբավորումներից՝ գործելով վերոհիշյալ կառույցների դրոշի ներքո:

ազդեցության տարածման փորձ արվեց այդ կառույցների կողմից [1] : Վերոհիշյալ կառույցները ոչ միայն արմատներ են գցել Ադրբեջանում[2], այլև դիտարկել են վերջինս որպես տարանցիկ երկիր՝ իսլամականների ջիհադական պայքարն աշխարհի այլ հատվածներում շարունակելու համար[3]:

Հիշյալ զարգացումներին զուգահեռ նկատվել է ադրբեջանցի իսլամականների արտահոսք հակառակ ուղղությամբ՝ «Իսլամական պետությունից» դեպի Թուրքիա, այնուհետև՝ դեպի Ադրբեջան: Դրա հետ կապված առկա է հետևյալ իրողությունը. «Իսլամական պետությունը» լքում են հիմնականում ռազմական գործողություններին ակտիվություն չդրսևորողներն ու թերացողները, որոնց թվում են նաև ադրբեջանցի որոշ իսլամականներ:

«Իսլամական պետությանը» և «Ջաբհաթ ալ-Նուսրա» իսլամական ծայրահեղ արմատական կառույցներին անդամակցելուն զուգահեռ ադրբեջանցի իսլամականները շարունակեցին ներգրավված լինել ընդդիմադիր այլ կառույցներում (*«Ջունուդ ալ-Շամ», «Նուր ադ-Դին Զինքի»* և այլն), որոնց գործողությունների արեալը հիմնականում ընդգրկում են Թուրքիայի հետ սահմանամեջ Սիրիայի հյուսիսարևմտյան տարածքները: Սիրիայի այս հատվածում թուրքոմանական գործոնի առկայությունը հնարավոր է դարձրել թուրքախոս իսլամականներին, այդ թվում՝ ադրբեջանցիներին, ինտեգրել Սիրիայի Լաթակիա, Իդլիբ, Հալեպ և Ալ-Ռակկա նահանգներում ակտիվորեն գործող թյուրքական ծագմամբ ընդդիմադիր կառույցների («Սուլթան Մուրադ», «Սուլթան Սուլեյման Շահ» և այլն) շարքերում և իրականացնել ջիհադական պայքար:

2016-2020 թթ. ՁԼՄ-ներում դարձյալ հրապարակումներ եղան Սիրիայում և Իրաքում ադրբեջանցի իսլամականների ու առաջնորդների վերաբերյալ[4], որտեղ խոսվել է ադրբեջանցի իսլամականների ակտիվության, այլ էթնիկ խմբավորումների շարքերում (հիմնականում ծագումով նախկին ԽՍՀՄ արեալը ներկայացնող իսլամականներից բաղկացած խմբավորումները) ադրբեջանցի ջիհադականների արդյունավետ ինտեգրվելու և ակտիվ ջիհադական պայքար մղելու մասին: Վերոհիշյալից բացի՝ ադրբեջանցի իսլամականներն իրենց հայրենակիցներին էին դիմում Սիրիայում և Իրաքում իրականացվող ջիհադին միանալու կոչերով: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Մերձավորարևելյան տարածաշրջանում իրականացվող ջիհադին միանալու վերոհիշյալ կոչերը պայմանավորված էին նրանով, որ հիշյալ ժամանակահատվածում ադրբեջանցիների հոսքը դեպի Սիրիա նվազել էր, և ադրբեջանցի իսլամականները կարիք ունեին համալրման:

Եթե Սիրիայում և Իրաքում կռվող ադրբեջանցի իսլամականների էթնիկ կազմի մասին հստակ տվյալներ չկան (կարելի է ենթադրել, որ Մերձավոր Արևելքում ակտիվ գործող ադրբեջանցի իսլամականները հիմնականում ներկայացնում են Ադրբեջանի հյուսիսային սուննիաբնակ հատվածը), ապա ադրբեջանցիների թվաքանակի մասին որոշակի տվյալներ առկա են: Մասնավորապես Ադրբեջանի անվտանգության պետական ծառայության ղեկավար Մադաթ Գուլիևի պնդմամբ 2017 թ. դրությամբ Ադրբեջանի շուրջ 900 քաղաքացի արդեն իսկ անդամակցել է Սիրիայում և Իրաքում գործող իսլամական ծայրահեղական կառույցներին[5]:

Բավական հետաքրքրական է այն փաստը, որ ադրբեջանցի իսլամականները բավական ակտիվ են եղել «Իսլամական պետության» ներսում հատկապես 2014-2016 թթ. նկատվող գաղափարական հակադրումներում՝ ներգրավված լինելով, այսպես կոչված,

---

[1] Հատկանշական է, որ 2014 թ. մի շարք լրատվական ռեսուրսներում տարածվեց «Իսլամական պետության» քարտեզը, որի մեջ էր նաև Ադրբեջանը (МНБ о провокации иракских ваххабитов против Азербайджана, Haqqin.az, 13 июня 2014 г., https://haqqin.az/news/24228 (մուտք՝ հունիսի 24, 2015)):

[2] Տե՛ս В Азербайджане задержаны пятеро азербайджанцев, воевавших в Сирии на стороне ИГИЛ, Gordonua.com, 17 октября 2015, http://gordonua.com/news/worldnews/v-azerbaydzhane-zaderzhany-pyatero-azerbaydzhancev-voevavshih-v-sirii-na-storone-igil-102506.html (մուտք՝ ապրիլի 2, 2016):

[3] Այդ առումով հատկանշական է տարածված այն տեղեկությունը, որ «Իսլամական պետությունը» փորձում է որպես տարանցիկ ուղիներ օգտագործել Ադրբեջանը, Վրաստանը ու Կիպրոսը՝ Ադրբեջանում և Կովկասում գտնվող իր կողմնակիցներին ուղղորդելու Թուրքիայում, Ադրբեջանում և աշխարհի այլ հատվածներում ահաբեկչություններ իրականացնելու համար (ИГИЛ нацелилась на Азербайджан – шокирующее заявление, Minval.az, 7 декабря 2016, http://minval.az/news/123602599 (մուտք՝ դեկտեմբերի 14, 2016)):

[4] Տե՛ս Alwaght, 29 Russian, Azerbaijani, Tajik Women Sentenced to Life for ISIS Links, April 29, 2018, http://alwaght.com/en/News/131524/29-Russian,-Azerbaijani,-Tajik-Women-Sentenced-to-Life-for-ISIS-Links:

[5] Տե՛ս DTX rəisi, Azərbaycanın 900-dək vətəndaşı Suriya və İraqda terrorçulara qoşulub, Apa.az, 03 Mart 2017, http://apa.az/xeber-az/hadise/dtx-reisi-azerbaycanin-900-dek-vetendasi-suriya-ve-iraqda-terrorculara-qosulub.html (մուտք՝ մարտի 4, 2017):

«հազիմիական» ուղղվածության խմբավորման մեջ և ունեցել ազդեցիկ առաջնորդներ այնտեղ[1]:

Ադրբեջանում իսլամական արմատական միտումների ակտիվության և ադրբեջանցի իսլամականների մերձավորարևելյան հակամարտություններում ներգրավվածության մասին էին խոսում նաև հենց ադրբեջանական ԶԼՄ-ներում վերջին շրջանում հաճախ հանդիպող հրապարակումները: Մերձավոր Արևելքից Ադրբեջան վերադարձող իսլամականների վերաբերյալ տեղեկություններ նույնպես եղել են. մի մասի նկատմամբ հարուցվել են քրեական գործեր: 2017 թ. սեպտեմբերին հրապարակված տեղեկությունների համաձայն՝ մոտ 80 ադրբեջանցիներ պատասխանատվության են ենթարկվել Սիրիայում և Իրաքում ահաբեկչական խմբավորումների շարքերում ջիհադական պայքարին մասնակցելու համար: Հավանաբար իշխանությունների կողմից պատասխանատվության է կանչվել ադրբեջանցի իսլամականների այն հատվածը, որի մուտքն ու ելքը Սիրիա (կամ Իրաք) ինչ-որ կերպ վերահսկվել ու գրանցվել է: Պարզ է, որ Մերձավոր Արևելքում ընթացող ջիհադին մասնակցած և հայրենիք վերադարձած ադրբեջանցիների մի մասը պատասխանատվության չի ենթարկվել. նրանցից ամեն ինչ սպասելի է[2]:

Ադրբեջանում իսլամական ծայրահեղականության ակտիվության ցուցիչ է 2019 թ. ամռանը համացանցում տարածված տեսանյութը, ըստ որի՝ «Իսլամական պետության» վարչատարածքային նոր միավորից՝ «Ադրբեջանի վիլայեթից», խալիֆ Աբու Բաքր ալ-Բաղդադիին հավատարմության երդում էին տալիս երեք ադրբեջանցիներ [3] : 2019 թ. հոկտեմբերին՝ Աբու Բաքր ալ-Բաղդադիի սպանությունից անմիջապես հետո, տարածվեց նման մի տեսանյութ, որում ադրբեջանցի իսլամականները վերահաստատեցին իրենց հավատարմության երդումը՝ ուղղված «Իսլամական պետության» նոր առաջնորդին: Այս տեսանյութերը ևս մեկ անգամ փաստեցին, որ Ադրբեջանը մնում է իսլամական ծայրահեղական կառույցների ուշադրության կենտրոնում[4]:

Հատկանշական է, որ 2020 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ղարաբաղ-ադրբեջանական սահմանին տեղի ունեցած 44-օրյա պատերազմի ժամանակ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից օգտագործվեցին Սիրիայից տեղափոխված վարձկաններ, որոնք ներկայացնում էին հիմնականում Սիրիայում կռվող թյուրքական խմբավորումները, և չի բացառվում, որ դրանց շարքերում ադրբեջանցի իսլամականներ (որոնք կռվել են Սիրիայում) ևս ներգրավված լինեին:

Ամփոփում

1. Կովկասյան տարածաշրջանում նկատելի են իսլամական ծայրահեղա-կանության դրսևորումներ, որոնք տեսանելի են ինչպես գաղափարախոսական տի-րույթում, այնպես էլ առանձին ռազմական գործողությունների տեսքով: Հիշյալ իրողու-թյան ետևում կանգնած են ցանցային կառույցներ և ազդեցիկ իսլամական լիդերներ, որոնք աչքի են ընկնում Կովկասյան տարածաշրջանում և այդ տարածաշրջանից դուրս:
2. ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանում նկատվել է իսլամական ծայրահեղ արմատական տրամադրություններով առաջնորդվող կառույցների ակտիվություն: Հատկապես 2000-ական թթ. կեսերից ադրբեջանական ուժային կառույցների բռնաճնշումների և հետապնդումների հետևանքով վերոհիշյալ կառույցներն անցել են ընդհատակ, սակայն վերջիններիս ֆունկցիոնալ ակտիվությունը դեռևս պահպանվում է:
3. Ադրբեջանցի իսլամականներն ակտիվորեն գործել և գործում են նաև Կովկասյան տարածաշրջանում, մասնավորապես Վրաստանում ու Ռուսաստանի կովկասյան տարածքներում:
4. Մերձավոր Արևելքում ընթացող ջիհադական պայքարում ակտիվորեն ներգրավված են Ադրբեջանից սերող իսլամականները: Սիրիայում և Իրաքում կռվող ադրբեջանցի իսլամականների էթնիկ կազմի մասին տեղեկությունները քիչ են: Ըստ ունեցած

---

[1] Տե՛ս Hamming T., Al-Hazimiyya: the ideological conflict destroying the Islamic State from within, ICCT Research Paper, May 2021, pp. 23-24, https://icct.nl/app/uploads/2021/05/Al-Hazimiyya-islamic-state-ideological-conflict.pdf:

[2] Տե՛ս Meydan.tv, В Азербайджане арестованы 80 человек за участие на войне в Сирии и Ираке, 12 сентября, 2017г., https://www.meydan.tv/ru/site/news/25085/:

[3] Դա Ադրբեջանից ստացված առաջին տեսանյութն էր, որում շեշտվում էր «Իսլամական պետության» կողմից Ադրբեջանի տարածքում ստեղծված վիլայեթի և Ադրբեջանում գործող ԻՊ բջիջի մասին:

[4] Տե՛ս Caucasian Knot, IS posted first video oath of Azerbaijani militants, July 3, 2019, https://www.eng.kavkaz-uzel.eu/articles/47682/:

տեղեկությունների՝ նրանք հիմնականում Ադրբեջանի հյուսիսի՝ լեզգիաբնակ և ավարաբնակ շրջաններից են, որտեղ զգալի թիվ են կազմում սուննիադավանները: Ադրբեջանական իրավապահ մարմինների կողմից վերոհիշյալ շրջաններում պարբերաբար անցկացվող ստուգումները, ձերբակալությունները, բռնությունները հատկապես սուննիական արմատական գաղափարներով առաջնորդվողների հանդեպ դավանական հետապնդումներն ու ճնշումները Ադրբեջանում իսլամի արմատական ուղղության և դրա վտանգավորության ցուցիչն են: Սակավաթիվ են Ադրբեջանում ծայրահեղ իսլամականների քանակի, տեղաբաշխումների, առաջնորդների ու էթնիկ պատկանելության մասին տվյալները: Այդուհանդերձ, բազմաթիվ փաստերը (Սիրիայի և Իրաքի ջիհադական պայքարն անցած իսլամականների վերադարձը Ադրբեջան, ձերբակալությունները և այլն) վկայում են Ադրբեջանում ակտիվ ջիհադական ներուժի մասին:

5. Ադրբեջանական իշխանությունների կողմից իսլամականների հանդեպ շարունակական հետապնդումներն ու ճնշումները նաև նպաստում են Ադրբեջանից դուրս իրականացվող ջիհադական այլ ճակատներում ադրբեջանցի իսլամականների թվաքանակի ավելացմանը: Հիշյալը փաստեց Մերձավոր Արևելքում ադրբեջանցի մեծաքանակ իսլամականների առկայության իրողությունը:

6. Մյուս կողմից՝ թուրք-սիրիական սահմանի վերահսկողության ուժգնացումը (հատկապես սահմանի թուրքական հատվածից) ու իսլամական ծայրահեղ արմատական կառույցներին ուղղված օդային հարվածներն ու ցամաքային արդյունավետ գործողությունները նվազեցնում են աշխարհի այլ հատվածներից, այդ թվում՝ Ադրբեջանից եկող իսլամականների ներհոսքը: Դրա հետ մեկտեղ 2016 թ. որոշ տեղեկատվական հոսքերի համաձայն՝ «Իսլամական պետությունը» փորձեր է ձեռնարկել օգտագործելու Ադրբեջանում գործող իր կողմնակիցներին ահաբեկչական գործողություններ իրականացնելու համար:

7. Առկա են նաև ադրբեջանական քաղաքական և կրոնական գործիչների կողմից իսլամական ծայրահեղ արմատական վտանգավոր միտումները երկրից դուրս ուղղորդելուն միտված քայլերը, որոնք ներառում են ադրբեջանցի իսլամականների ներուժն այլ երկրներում կիրառելու ուղղորդումները (այդ թվում՝ նաև դեպի ղարաբաղյան հակամարտություն):

8. Ուղղորդվող ջիհադական ներուժի թիրախում են հայտնվում Մերձավորարևելյան տարածաշրջանում, հատկապես ռազմական գործողությունների թատերաբեմում հայտնված էթնոդավանական փոքրամասնությունները: Թուրք և ադրբեջանցի ծայրահեղ իսլամականներից բաղկացած խմբավորումներն իրենց գործողություններով սպառնալիք են հայկական համայնքների համար՝ ոտնձգություններ իրականացնելով սիրիահայերին պատկանող պատմական կրոնամշակութային հուշարձանների հանդեպ (Քեսաբի հայկական եկեղեցիների ավերումներն ու թալանը, Դեր Զորի Սրբոց նահատակած եկեղեցու պայթեցումը, ժամանակին ընդդիմադիր ուժերի կողմից վերահսկվող Հալեպի որոշ հատվածներից կառավարական ուժերի վերահսկողության տակ գտնվող Հալեպի հայաբնակ թաղամասերի ինտենսիվ ռմբահարումները և այլն):

9. Ռազմական փորձ ձեռք բերած ադրբեջանցի իսլամականների որոշ հատվածը, ետ վերադառնալով Մերձավորարևելյան տարածաշրջան, ազդեցիկ իսլամական ծայրահեղական կառույցների կողմից հետագայում դիտարկվում է որպես միջոց ոչ միայն Կովկասում, այլև հենց Ադրբեջանում ազդեցության տարածման համար: Բացի դրանից՝ Մերձավոր Արևելքում կռվող իսլամականները տարբեր թելերով կապված են միմյանց, և այդ կապը կարող է օգտագործվել արդեն աշխարհի տարբեր հատվածներում գտնվող ջիհադականների ուղղորդման համար:

10. Իսլամի ծայրահեղ արմատական ուղղությունը շարունակելու է ակտիվ մնալ Ադրբեջանի Հանրապետությունում: Իշխանությունների կողմից բռնաճնշումների պարագայում շարունակվելու են արմատական դրսևորումները, որից ապահովագրված չէ նաև Ադրբեջանը:

11. Սիրիայում կառավարական ուժերին սատարող խմբավորումների կազմում շիա ադրբեջանցիների ներգրավվածության մասին փաստեր ևս կան:

Саргис Григорян, АКТИВНОСТЬ АЗЕРБАЙДЖАНСКИХ ИСЛАМИСТОВ НА КАВКАЗЕ И БЛИЖНЕМ ВОСТОКЕ. Преобразования, начавшиеся в мусульманских странах в конце

20 - начале 21 века, повлияли на подъем новой волны исламского экстремизма в населенных мусульманами частях мира, включая Кавказский регион, особенно в Азербайджане.

В связи с этим в Азербайджане заметна активность исламского экстремизма и активное участие азербайджанских исламистов на Кавказе и на Ближнем Востоке.

В данной статье исследуется деятельность азербайджанских исламистов, ее причины, фактические применение, географическая зона действий, опасности и угрозы на Кавказе и Ближнем Востоке. Эти проявления особенно заметны среди азербайджанцев-суннитов.

Ключевые слова: Исламисты, экстремизм, Азербайджан, «Исламское Государство», Кавказ, Ближний Восток.

Sargis Grigoryan, ACTIVITY OF AZERBAIJANI ISLAMISTS IN THE CAUCASUS AND IN THE MIDDLE EAST. At the end of the 20th century and beginning of the 21st century the reforms that began in Muslim countries have had an impact on the rise of a new wave of Islamic extremism in Muslim-populated parts of the world, including the Caucasus region, particularly Azerbaijan.

In this regard, the activity of Islamic extremism is visible in Azerbaijan and the active involvement of Azerbaijani Islamists in the Caucasus and the Middle East.

This article examines the activity of Azerbaijani Islamists, the reasons for the activity, their practical applications, the scope of actions, dangers and threats in the Caucasus and the Middle East. These manifestations are especially visible among Sunni Azeris.

Key words: Islamists, extremism, Azerbaijan, “Islamic State”, Caucasus, Middle East.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 2

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Մերի Հովհաննիսյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 300